



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հոգևորականության

ԹԻՓ. ԽՈՒՍԿԻՎԱԶԷ

357 11532

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

(Էսկիզ)

ՎՐԱՅ. ԹԱՐԳՄ. Դ. Կ.



ԹԻՓԻՍ 1904

Տպարան «ՆԵՐՄԷՍ» Միք. փողոց № 81
(13)

899.962.1
Խ-89

899.962.1

խ-89

STOS YAN #1
8 NOV 2011

ար

ԹԼՕՓ. ԽՈՒՍԿԻՎԱԶԷ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

1001
4875

(Էսկիզ)



ԹԻՖԼԻՍ 1904

Տպարան «ՀԵՐՄԷՍ»: Միջ. փողոց № 81

(13)

14 MAY 2013

74.600



ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆՐ

Доз. ценз. Тифлисъ. 22-го марта 1904 г.

Ես շատ եմ սիրում գերեզմանա-
տանը գրօսնել և յաճախ եմ լի-
նում այնտեղ: Ռ՛վ գիտէ այդտեղ
հարթ տարածութեան վրայ՝ քանի
տեսակ կրօնի ու դաւանութեան
պատկանող կենդանի ապրողնե-
րիս ներկայացուցիչներ են հաւա-
քուած . . . Դրանք համախմբուել
են միասին, ամուր կպել միմեանց

և հանդչում են այդտեղ երկարատե քնով, . . . Նրանցից այլ ևս չի լսում ո՛չ տրտունջ, ո՛չ վիշտ, ո՛չ նախանձ, դրանցից ոչ ոք ո՛չ անհաւատարիմ է, ո՛չ թշնամի միւսի և ո՛չ էլ ատում է ուրիշներին, . . . Դրանց թւում չկայ ո՛չ մի դժգոհ կամ ըմբոստ Ամէն մէկը գոհ է իր վիճակից ամեն տեղ տիրում է անդորբութիւն, մարդասիրութիւն և համերաշխ կեանքն է թագաւորում այնտեղ Այլ ևս չեն լսում դժբաղդ թշուառների մշտական սրտամոլիկ հեծեծանքներն ու հառաչանքները, չէք տեսնում նրանց տկլոր, ոտաբորիկ փողոցներում թափառելիս՝ մի կլ-

տոր հաց մուրալու համար Այնտեղ ո՛չ դատաստան կայ, ո՛չ էլ դատաւոր, որովհետև ոչ ոքի հարկաւոր չեն այդ բաներ . . . , Թւում է թէ այստեղ ամենքն էլ գոհ են իրանց վիճակից, իրանց զրութիւնից : Այլևս ձեր աչքը չի ծակում մեծաւորների քմահաճոյքը, փառասիրութիւնը Կարծես բնութեան աներևոյթ ոյժը ամենքին ևս հաւասարեցրել ու խաղաղացրել է Ո՛չ մէկի բերանից ձայն-ժպտուն չի լսում Երկի դրանց կեանքը այնպէս է յարմարեցրած, որ ամեն բանի մէջ հաւասարութիւն լինի ամենքի վերայ, եղբայրասիրութիւն ու հա-

մերաշխութիւն տիրէ: Ոչ մի բանի մէջ պակասութիւն չի զգացւում, այնտեղ գոյութիւն չունի մեծ ու փոքր, իմ ու քո . . .

Ճիշտ որ նախանձելի է այդ տեսակ կեանքը, երբ մարդ ամեն բանից գոհ է և հանդիստ . . .

Սակայն մարդու սիրտը լինելով անկուշտ, ոչ միայն այդ համերաշխութիւնը չի գոհացնում ներքան, այլ կարծես այդ համերաշխութիւնը ստորացնում է նրա հրպարտ ինքնասիրութիւնը, այդ տեսակ միակերպութիւնն ու միօրինակութիւնը նա իր հպարտութեան համար նախատինք է համարում: Մարդկային չափ չճանաչող

ինքնասիրութիւնը այդտեղ էլ է կարծես դանազանութիւն դնում, վասնզի այդտեղ էլ է փառաբանւում մեծութիւնը Հնապանայեցէր ձեր շուրջը և ուշադրութեամբ զննեցէք: Սակայն այնքան էլ ուշադրութեամբ զննելու կարիք չկայ: Ահա ձեր աչքի առաջ, այնտեղ բարձրանում է բրօնզից շինած արձանը: Նա անխօս է, բայց ամեն ինչ ասում է. որովհետև արձանի փառահեղութիւնից և մեծութիւնից աչքի է ընկնում, թէ ո՞վ պէտք է լինի պատկած նրա տակ Սակայն բոլորովին մօտեցէք Այժմ հասկացնր թէ ո՞վ է նա, համոզուեցնր նրա

ով լինելը: Այժմ նայեցէք նրա կողքին Արժանացրէք ձեր ուշադրութեան նաև հասարակ փայտեայ խաչի տակ գտնուողին: Մօտեցէք, կարդացէք: Գուցէ այդ փայտեայ խաչի վրայ էլ մի բան լինի արձանազրուած. «այստեղ հանդչում է գիւղական ուսուցիչ Իվան Խաթրաձէն»:

Խեղճ—ողորմելի, ճիշտ որ գիւղական ուսուցիչ ես եղել: Ճանաչում եմ, լաւ եմ ճանաչում քեզ, սով տարաբաղզ գործիչ, քո սով լինելը արդէն յայտնի է: Ռ՛վ գիտէ թէ քանի-քանի քեզ նման ճնշուած, ազնիւ աշխատաւորի արիւն-բլբլ տինքով վաստակած հացի կտորը

յափշտակել ու կուլ է տուել կողքիդ գտնուող շքեղ արձանով հարեանդ: Կասկած չկայ, որ քո լուսն էս նրա վրայ գրած արձանի փառահեղութեան համար է գործադրուել: Սակայն սրբան անթիւ մեղքեր են պտտուում այդ փառահեղ արձանի շուրջը Նրա կեանքի կենսագրական էջերը լի են զագրելի կեղտոտութիւններով, որոնց յաճախ դու ինքզ էլ վկայ ես եղել Քո սիրտը լցում էր դառնութեամբ, որ չէիր կարողանում մարտուել Բայց քաղցր յոյսերով շունչդ փչեցիր, կարծելով թէ հանդերձեալ աշխարհում պատշաճ տեղ կունենայիր, գէթ

մահուանից յետոյ արժանի կերպով կը գնահատէին քեզ . . . Ռ՛հ, զժբազդ: Երանի թէ յայտնի լինէր քեզ, որ այդ բանում կս յուսախաբուած ես եղել լոկ յոյսերով: Երանի կենդանի լինէիր ու տեսնէիր շքեղ արձանով հարեանիդ յուզարկաւորութեանը, և աւկանատես լինէիր գերեզմանատանը, անցած-զարձածին: Նա, ով նրա կենդանութեան ժամանակ եղել էր նրա երդուեալ թշնամին, նախատողն ու ամենուրէջ վրիժառուն, զլիսի մօտ կանգնած ճառախօսում էր . . . մեծ գովասանքներով պսակում նրա գլուխը . . . պիրճախօս կերպով զը-

րուատում էր հանգուցեալ աշխարհին հարստութեան փառքը, արիութիւնն ու կորովամտութիւնը: Համարեա ամբողջ քաղաքը ներկայ էր . . . Այս ահագին գերեզմանատունը լի էր բազմութեամբ . . . Իսկ մահուանից յետոյ՝ ահա այս փառահեղ մահարձանն է ազգաբարում ամբողջ աշխարհին նրա ով լինելը . . .

Իսկ դ՞ու, դ՞ու, ողորմելի գործիչ. արդեօք յայտնի է քեզ թէ ինչ ձևով կատարուեց քո յուզարկաւորութիւնը: Հագիւ կարողացան երկու մարդ գտնել՝ քո գազազը տանելու համար . . . Ին մահը բացի քո աշակերաներից ոչ

որի յայտնի չէր... Եւ արդեօք
նւմ կարող էր ցաւ պատճառել քո
կորուստը, եթէ ոչ դարձեալ այդ
աշակերտներիդ, որոնց սրտում
բարի սերմեր էիր ցանում մեր
դժբաղդ հասարակութեան օգտա-
կար անդամներ լինելու... Ահա
այդ փայտեայ խաչը անմխիթար
մնացած մօրդ նուէրն է... Ի
հարկէ, վրայիդ փայտեայ խաչը
անշուք է և հասարակ, բայց և
պարզ ցոյց է տալիս քո անշահա-
սէր ու անաշառ գործունէութիւ-
նը... փայտեայ խաչ, բայց զի-
մացկուն ու մաքառող բոլոր ար-
դելքներին... Փայտեայ խաչ,
բայց զիմացկուն այն բրօնզից, որ

հպարտօրէն բարձրացել է և իր
հայեացքով իշխում է իր շուրջը...
Սակայն վաղանցուկ իշխանու-
թիւն... ամբարշտ

Մի ընկճուիք, տարաբանող գոր-
ծիչ, մի վհատուիք, որ այդպէս
անշուք հանգչում ես այստեղ: Ա-
շակերտներիցդ ամեն մէկի կուր-
ծքը քեզ համար կենդանի յուշար-
ձան է... Բոլոր աշակերտներիդ
կրծքի տախտակի վրայ արձանա-
գրուած է երախտագէտ շնորհա-
կալութիւն, խորին սէր և անմահ
յիշատակ: Թո՛ղ քեզ չ'վհատեցնէ,
բրօնզեայ արձանի փառահեղու-
թիւնը և ոչ էլ նրա դագաթի փայ-
լուն խաչը: Այդ բոլորն արդիւնք


է անձնական կարողութեան, հարստութեան և նշան ունայն փառասիրութեան: . . . Թէ ինչ է արել նա յօգուտ ճշուածներէի, այդ պարզ ապացուցանում է նրա արձանի շուրջը բուսած խիտ փշերը . . . Օր չէր անցնի, որ չբաղեն ու չմաքրեն, բայց գերեզմանի պարարտ հողը նոյնանման փշերը արագ-արագ բուսցնում է . . .

Մինչդեռ քո փայտեայ խաչի շուրջը զրաւիչ կերպով զարդարել են վարդի թփերը, որոնք իրանց կոկոններից յորդ արցունքների նման ցօղից առուակներ են հասեցնում վրադ: Նրանց անուշահոտ բուրմունքից զինովցած սո-

խակը իր անոյշ դայլայլով քո երախտիքը հեռու—հեռու է սրփուում և ազդարարում համայն աշխարհին. Այդ էլ բաւական է քեզ, իմ անզին գործիչ: Այստեղ հանգիլը այն հաւատով՝ որ քո անձնագորհ հողու տանջանքները իզուր չեն անցել . . . քո ցանած սերմերը անպտուղ չեն կորել Գո սկսածը մինչև այժմ անընդհատ շարունակում են՝ իրանց ամբողջ հոգևով քո սիրած բարի գործերին նուիրուած եղբայրակիցներդ . . . Նրանք էլ քեզ նման բարոյական զէնքերով են զինուած . . . Բայց այն՝ ինչ որ դու չկարողացար իրագործել, այժմ նրանց բարոյա-

կան պարտականութիւնն է զար-
ձեւ իրագործելու: Ուրեմն էլ մի
տխրիք, հանդստացիր խաղաղու-
թեամբ և այլ ևս մի նախանձիր
քո վիճակակից հարեանի ունայն
փառքին:

Վ Ե Ր Զ.



« Ազգային գրադարան »



NL0389713

ՎՐԱՅՆԵՐԷՆԻՅ ԹՄՐԳՄԱՆՈՒԱԾ
ԳՐԹՈՅԿՆԵՐ

1. Նինոսովիլի Է. Հրաման (պատմութեամբ) 5 կ.
2. Խուսկիվաձէ Թ. Գերեզմանատանը
(Էսկիզ) 3 կ.
Շուսուվ լոյս կը տեսնի
3. Ղազրեզի Ա. Ֆաթի—Զատկական
պատմութեամբ 5 կ.

Ցանկացողները կարող են դիմել՝ Զա-
բարեայ Գրիգորեանցի «Կովկասեան
գրավաճառանոց»

Գինն է 3 կոպ.